

զոր տեսանք հին ազգերու մէջ: Իրական աղին կամ շատ աղոտ կարկանդակաց ճաշակումը կար յոյն սեղանին վրայ եւս՝ գինարբութեան պահուն (Դար. Ա., 1275). եւ կ'երեւի թէ Փիլոնի օրով դեռ կ'ուտուէր աղն իսկ, ըսել տալու համար անոր՝ թէ «աղ եւ սեղան» թշնամութիւններ շիջուցին (Ճոթ. 17), համաձայն նաեւ յոյն բնագրին:

Միջին դարուն սակայն մեր քով դաշերած է աղակերութեան սովորոյթը, եւ հին բացատրութիւնն ուրիշ արարողութիւն մը կը նշանակէ: Տաթեւացին է զայս յիշատակողն՝ ըսելով. «Զինչ է աղուհաց կրտսերն». եւ կը պատասխանէ. «Երկուքն բաժանեն զմի հացն. եւ դարձեալ հատանեն ի ձեռս իւրեանց, եւ լինի խաչ»: Այս ինքն՝ հազիւ ճաշի նստած, բարձերէցն եւ մերձաւորներէն մին սեղանէն նկանակ մը կ'առնուն, եւ քաշելով՝ զայն երկու կտոր կ'ընեն. յետոյ իւրաքանչիւրն իւր ձեռքը մնացած մասը դարձեալ երկուքի կը բաժնէ, որով հացը խաչաձեւ կտրուած կը լինի: «Զայս, կ'ըսէ, ի Քրիստոսէ ուսաք». եւ այս պատճառաւ կը պահանջէ՝ որ քրիստոնէից հետ միայն կատարուի ա-